ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 8, 1954 Общественные науки

Ռ. Կարապետյան

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ Ն. Գ. ՉԵՐՆԻՇԵՎՍԿՈՒ ԷԹԻԿԱՅՈՒՄ

Ռուս մեծ մտածող և ռևոլյուցիոն-դեմոկրատ Ն. Գ. Չերնիշևսկին նախամարքսյան մատերիալիզմի ամենալուսավոր դեմքն է։ Հանձին նրա նախամարքսյան մատերիալիզմը հասավ իր զարգացման բարձրագույն աստիճանին։ Չերնիշևսկին կարողացավ մեծ չափով ազատագրվել մինչմարքսյան սոցիոլոգիայի թերություններից, բայց վերջնականապես չկարողացավ հանգել պատմական մատերիալիզմին։ Պետք է նշել, որ Չերնիշևսկին նախամարքսյան մատերիալիզմը բարձրագույն աստիճանի հասցրեց հատկապես հասարակական երևույթների վերաբերյալ զարգացրած իր նոր, թարմ, հետաքրքիր և հասուն դրույթներով։

Լինելով մատերիալիստ և մատերիալիստական աշխարհայացքը ծառայեցնելով գյուղացիության ազատագրության, ճորտատիրության վերացման պայքարի գործին, Չերնիշևսկին իր էթիկայում հանդես էր գալիս մատերիալիստական սենսուալիզմի դիրքերից։ Նա պաշտպանում էր բոլոր մատերիալիստների համար ընդհանուր այն հայացքը, որ մարդկանց բարոյական սկզբունքները հանդիսանում են նրանց զգայությունների և գիտակցության վրա շրջապատող հասարակական միջավայրի ազդեցության արդյունքը։ Այս տեսակետից ունենալով ընդհանուր կողմեր Դիդրոյի, Հելվեցիուսի և Ֆոյերբախի հետ, Չերնիշևսկին արտահայտում էր այնպիսի մտքեր, որոնք արմատապես տարբերվում են վերջիններիս էթիկական հայացքներից։

Չերնիշևսկին ընդգծում էր, որ ինչպես բնական գիտություններն են հետազոտում բնության երևույթների բազմազանության, փոփոխությունների պատճառները, այնպես էլ բարոյական գիտությունները պետք է բացատրեն մարդու հոգեկան հատկությունների, բնավորությունների, սովորույթների դրսևորումների պատճառները։ Նա նշում է, որ մարդը, լինելով կենդանի էակ, ֆիզիկապես կապված լինելով բնության հետ, ձգտում է դեպի հաճելին և խուսափում է տհաճից։ Դա մարդկային բնավորությունն է։ Սակայն, որոշո՞ւմ է արդյոք այդ բնավորությունը մարդու բարի կամ չար լինելու հատկանիշը։ «Մարդը բարի է լինում այն ժամանակ,— գրում է Չերնիշևսկին,— երբ իր համար հաճելին ստանալու համար նա պետք է հաճելի բան կատարի ուրիշների համար։ Չար լինում է նա այն ժամանակ, երբ ստիպված է հաճելիություն կորզել իր համար ուրիշներին հասցրած տհաճությունից։ Այստեղ մարդկային բնավորությունը չի կարելի ո՞չ նախատել մեկի համար, ո՞չ գովել մյուսի համար։ Ամեն ինչ կախում ունի հանգամանքներից, հարաբերություններից, հաստատություններից»[1]*։ Առանձին մարդու մասին կարելի է ասել չար է նա, թե բարի։ Բայց ընդհանրապես խոսել մարդու չար կամ բարի լինելու մասին անհնարին է այն-*

---

[1] Ն. Գ. Չերնիշևսկի. Փիլիս. ընտիր երկեր, Երևան, 1949, էջ 67։

պես, ինչպես որևէ մարդու մասին կարելի է ասել, որ նա հյուսն է, բայց չի կարելի պնդել, թե մարդը ընդհանրապես հյուսն է։

Վերլուծելով Վ. Պ. Բոտկինի նամակները Իսպանիայի մասին և նկարագրելով իսպանական ժողովրդի բարքերն ու սովորությունները, Չերնիշևսկին եզրակացնում էր, որ իսպանացիների որոշ բարոյական գծերը գոյություն ունեցող հասարակական և քաղաքական հարաբերությունների արդյունքը պետք է համարել [1]։

Չերնիշևսկին ռուսական հասարակության տարբեր խավերի մարդկանց բարոյական վատ, բացասական կողմերը համարում էր դրանք ծնող հանգամանքների մեղքը։ Անդրադառնալով Շչեդրինի «Նահանգական ակնարկներին», նա ցույց էր տալիս, որ այն արատները, որոնցով օժտված են, օրինակ, առևտրական կամ հոգևոր դասի ներկայացուցիչները, հետևանք են հասարակական այն հարաբերությունների և հասարակության մեջ տիրող այն ընդհանուր սովորույթների, որոնք գոյություն ունեին Ռուսաստանում։

«Դովարանել կամ նախատել կարելի է միայն էքսցենտրիկ մարդկանց, որոնք վարվում են ոչ այնպես, ինչպես վարվում է նրանց ժամանակի և նրանց դրության մեջ գտնվող մարդկանց հսկայական մեծամասնությունը։ Այն սովորությունները և կանոնները, որոնք ղեկավարում են հասարակությունը, առաջանում և պահպանվում են շնորհիվ ինչ-որ փաստերի, որոնք անկախ են նրանց հետևող մարդու կամքից. նրանց վրա պետք է նայել անպայման պատմական տեսանկյունից» [2]։

Իր աշխատություններում Չերնիշևսկին ամեն առիթ օգտագործում էր լիբերալիզմը և լիբերալ գործիչների բարոյական սկզբունքները քննադատելու համար։ Այսպես, օրինակ, նա խոր վերլուծության էր ենթարկում Ի. Ս. Տուրգենևի «Ասյա» վիպակը, և քննադատության էր ենթարկում վիպակի հերոս Ն-ին և նրա նման այլ հերոսների՝ ռուդիններին, բելտովներին և այլոց, որոնք, ըստ Չերնիշևսկու, ժրաջանություն են ցուցաբերում, քանի դեռ գործ չկա և անհրաժեշտ է խոսքի, գրույցի միջոցով լցնել դատարկ ժամանակը, իսկ երբ գործը վրա է հասնում և որոշակի ու անմիջական գործունեության պահանջ առաջադրում այդ հերոսներին, ապա նրանք սկսում են տատանվել և նույնիսկ մոռանալ իրենց վաղեմի պերճախոսությունը։ Սակայն բարոյական այս հատկությունը, ըստ Չերնիշևսկու, ոչ թե այդ հերոսների մեղքն է, այլ նրանց դրժբախտությունը։ Մեղավորն այն հանգամանքներն են և գոյություն ունեցող այն ընդհանուր սովորությունները, որոնց ենթարկվում են այդ մարդիկ [3]։

Բայց ի՞նչ հանգամանքներ են դրանք, որ առաջ են բերում հասարակության մեջ այդպիսի սովորություններ և մարդկային բնության համար անընդունելի բարոյական գծեր։

Այս հարցի պատասխանում էլ հենց դրսևորվում է Չերնիշևսկու էթիկայի կերաղանցությունն արևմտաեվրոպական մտածողների էթիկայից։

Անդրադառնալով մարդկանց շրջապատող բնական պայմաններին, աշխարհագրական միջավայրին, Չերնիշևսկին մատնանշում էր, որ աշխարհագրական միջավայրն իր ամբողջ ուժը երևան է բերում հատկապես ժողովրդի

---

[1] *ՏԵ՝ Н. Г. Чернышевский.* Полное собрание сочинений, т. IV, стр. 233—234.
[2] Там же, стр. 279.
[3] Там же, т. V, стр. 165.

կյանքի սկզբնական շրջանում միայն [1], բայց բնական պայմանները կորցնում են իրենց ուժը ժողովրդական զբաղմունքների և նրանց կենցաղի բնույթի վրա, երբ ժողովուրդը մտնում է պատմական կյանքի մեջ։ Չերնիշևսկին համոզիչ կերպով ցույց է տալիս, որ բնական պայմանները չեն կարող որոշիչ լինել մարդկանց կենցաղի ու զբաղմունքների զարգացման կամ ձևավորման համար, այլապես միևնույն կլիմայում ապրող ժողովուրդներն իրենց պատմության տարբեր ժամանակաշրջաններում հանդես չէին բերի կենցաղավարության տարբեր ձևեր կամ միևնույն կլիմայում ապրող ժողովուրդների կյանքի ու կուլտուրայի մակարդակը տարբեր չէր լինի։ Աքսորից իր որդիներին գրած՝ 1876 թ. ապրիլի 27-ի նամակում Չերնիշևսկին անդրադառնում էր այդ հարցին, և անմիտ համարելով հասարակական հարաբերությունների բնույթը կլիմայական գոտիների տարբերությամբ բացատրելու տենդենցը, նշում էր, որ քաղաքակրթության զարգացման ցածր աստիճանը շոգ, հասարակածային գոտում կլիմայի հետևանքը չէ, որտեղ, որոշ տեսաբանների կարծիքով, իբր թե հնարավոր չէ աշխատելը։ Չերնիշևսկին նշում էր, թե ինչպես ավելի դաժան կլիմայական պայմաններ ունեցող Անգլիայում քաղաքակրթությունը գտնվում էր ավելի բարձր աստիճանի վրա, քան կլիմայական մեղմ պայմաններում գտնվող Օստ-Ինդիայում կամ Հունաստանում [2]։

Նույն դիալեկտիկական մոտեցումն է ցուցաբերում Չերնիշևսկին բարոյականությունը, սովորությունները խառնվածքով բացատրելու հարցի նկատմամբ։ Ի հակադրություն Հոլբախի, Դիդրոյի և Ֆոյերբախի, որոնք խառնվածք ասելով հասկանում էին մարդկանց ֆիզիոլոգիական հատկանիշների ամբողջությունը և դրանով բացատրում էին հասարակության բարոյականությունը, Չերնիշևսկին, ելնելով զանազան ժողովուրդների, զանազան խառնվածքների տեր մարդկանց մանրազնին համեմատություններից, գալիս էր այն եզրակացության, որ խառնվածքով, կամ մարդու մարմնի ու գանգի ձևերով չի կարելի բացատրել մարդկանց բարոյական սկզբունքների, զգացմունքների ու արարքների այս կամ այն դրսևորումները։ Այդ բանն ապացուցելու համար Չերնիշևսկին դիմում է սպիտակ ռասայի ժողովուրդների համեմատությանը։ Անգլիացին, ֆրանսիացին, իտալացին, իսպանացին, ռուսը և գերմանացին այնքան են տարբերվում միմյանցից, ինչքան գասկոնացին՝ նորմանդացուց, վորոնեժցին՝ յարոսլավցուց։ Այս համեմատություններն անելուց հետո Չերնիշևսկին եզրակացնում է. «Կենդանաբանական համեմատությունները և ֆիզիոլոգիական կշռադատումները ապացուցում են... որ եվրոպական ժողովուրդների ցեղական առանձնահատկությունները չեն կարող հիմք ծառայել նրանց կենցաղի և սովորությունների համար, որ այդ տարբերությունները չափազանց չնչին են նման մեծ զանազանություն առաջացնելու համար»[3]։ Ինչ վերաբերում է խառնվածքների տարբերություններին, ապա նկատվում է, որ տարբեր ազգերի ու դասակարգերի մեջ, անկախ կլիմայական պայմանների տարբերություններից, կան ամեն տեսակի խառնվածքի տեր մարդիկ։ Շատերը անգլիացուն վերագրում են խելամտություն և անդրդվելիություն։ Բայց հռոմայեցիները ոչ մի չափով չէին զիջում այդ հատկություններով անգլիացիներին։ Արդեն սովորություն է դարձել հակադրել ֆրանսիացու թեթևամտությունը

[1] Տես Н. Г. Чернышевский, Полн. собр. соч., т. IV, стр. 480.
[2] Там же, т. XIV, стр. 656.
[3] Там же, т. IV, стр. 478.

և անխոհեմությունն անգլիական շրջահայեցությանը և խելամտությանը։ Բայց դա չի ժխտում, որ անգլիացին ևս ֆրանսիացուց պակաս ընդունակ չէ հրապուրվել, անմտություններ անել, վտանգի տակ դնել կյանքն ու հարստությունը։ Մոնղոլները սառնարյուն են, արաբները՝ դյուրագրգիռ, բայց թե՛ առաջինների և թե՛ երկրորդների նվաճումները փայլուն են եղել։ Կար ժամանակ, երբ այժմ ծույլ թվացող արաբներն աչքի էին ընկնում անգլիացիներին չզիջող գործարարությամբ, և ընդհակառակը, գերմանացիներն ու բրիտանացիներն աշխարհի ամենածույլ լակներն էին։ Այսպիսով, չի կարելի խառնվածքով բացատրել ժողովուրդների սովորությունները, բարոյական ու մտավոր հատկությունները և նրանց փոփոխությունները։ Մեծ մտածողն ընդգծում էր, որ խառնվածքների տարբերությամբ չի որոշվում մարդկանց ո՛չ աշխատասիրության աստիճանը, ո՛չ էլ բարեխղճության, ազնվության կամ խոհականության չափը[1]։

Խառնվածքների մասին իր այս դրույթներով Չերնիշևսկին հիմնովին տարբերվում էր Հոլբախից, Դիդրոյից և Ֆոյերբախից, որոնք կախման մեջ դնելով մարդկանց բարոյական սկզբունքները նրանց խառնվածքներից, ոչ միայն որոշ իմաստով տուրք էին տալիս վուլգար մատերիալիզմին, այլև սողանցք էին թողնում բնածին իդեաների տեսության համար։ Չերնիշևսկին հիմնովին մերժում էր բնածին իդեաների ուսմունքը։ Նա ցույց էր տալիս, որ ո՛չ թե խառնվածքն է որոշում մարդկանց բարոյական և մտավոր հատկանիշները, այլ, ընդհակառակը, հենց խառնվածքները սովորությունների և հանգամանքների արդասիք են։

Չերնիշևսկին այլ ձևով էր լուծում նաև բարոյականության վրա օրենքների, քաղաքական կարգերի ազդեցության հարցը։

Նա չէր ժխտում, որ օրենքները ազդում են մարդկանց բարոյական հատկությունների, սովորությունների, կենցաղի վրա։ Սակայն, ի տարբերություն Հելվեցիուսի, որն օրենքները դարձնում էր հասարակության ամբողջ բարոյական նկարագրի հիմքը, Չերնիշևսկին ցույց էր տալիս, որ կառավարությունների կողմից հրատարակված այն օրենքները, որոնք բխում են հասարակության կենցաղից, սովորություններից, դրականորեն են ազդում նրանց ձևավորման ու զարգացման վրա։ Իսկ այն օրենքները, որոնք հակասում են ժողովրդի բարքերին, սովորություններին, կենցաղին, բացասաբար են անդրադառնում նրանց վրա։ Օրենքը ամենազոր չէ։ Օրենքը «ամենազոր է, երբ, ճանաչելով չարիքի իսկական պատճառը, օրենսդիրը փոխում է այդ չարիքն առաջացնող հաստատությունները»[2]։ Բայց երբ օրենքը, առանց դիպչելու չարիքը ծնող քաղաքացիական հաստատություններին, նպատակ է դնում վերացնել չարիքը, ապա նա անզոր է դառնում։ Այսպես, օրինակ, երբ հռոմեական կայսրերը օրենքներ էին հրատարակում ճոխության և այլասեռվածության հետ միացած ամուրիության դեմ, ապա նրանք ոչ մի արդյունքի չէին հասնում, որովհետև այդ երևույթները ստրկատիրական կարգերի ծնունդն էին։ Հետևապես, միայն այն կառավարությունները և միայն այն օրենքներն ուժ ունեն, որոնք կարողանում են ելնել գոյություն ունեցող հասարակական հարաբերություններից։

Հասկանալի է, որ ռևոլյուցիոն-դեմոկրատ Չերնիշևսկին հանդես էր գալիս ցարական կառավարության օրենքների դեմ, երբ մի կողմից՝ հասարակական

[1] Տես Ն. Գ. Չերնիշևսկի. Փիլիս. ընտիր երկեր, էջ 310։
[2] Н. Г. Чернышевский, Полн. собр. соч., т. IV, стр. 491.

բարքերի փոփոխության բարելավման համար առաջարկում էր քաղաքացիական հաստատությունների փոխակերպումը, իսկ մյուս կողմից՝ ակնարկում էր ցարական օրենքների հակաբնական, հասարակության սովորություններին ու բարքերին հակադիր լինելու հանգամանքը։ Նա ցանկանում էր ասել, որ ինչպիսի օրենքներ էլ հրատարակելու լինի Ռուսաստանի կալվածատիրական միապետությունը, միևնույն է, եթե նույնիսկ նա շահագրգռված լինի, չի կարող փոփոխություններ առաջ բերել ռուս ժողովրդի սովորությունների ու բարոյականության մեջ, վերացնել նրանց կենցաղում գոյություն ունեցող բացասական կողմերը, եթե նա հիմնովին չփոխի այդ բացասական կողմերի, հասարակության մեջ թագավորող չարիքի հիմքը հանդիսացող քաղաքացիական հաստատությունները։ Եթե ռուսական հասարակության տարբեր խավերի բարոյական պատկերը գնալով ավելի անմխիթարական է դառնում, ապա դրանում մեղավոր է ցարական կառավարությունը[1]։

Այսպիսով, ըստ Չերնիշևսկու, օրենքները, որոնք կարող են պայմանավորել ժողովրդի, ազգի բարքերի ու սովորությունների բնույթը, իրենք պայմանավորված են պատմականորեն ստեղծված քաղաքացիական հաստատություններով։ Սակայն այս խոր մտքից Չերնիշևսկին չկարողացավ ճիշտ եզրակացությունների հանգել, նա չհասավ բազիսի և վերնաշենքի մարքսիստական հասկացողությանը։ Չերնիշևսկին սխալմամբ պնդում էր, որ, օրինակ, իսպանական ժողովրդի որոշ ապատիայի պատճառը պետք է որոնել այնպիսի հաստատությունների մեջ, ինչպես ինկվիզիցիան է, որը դարերով խեղդել է Իսպանիայում ազատ մտքի ստեղծագործությունը, իսկ ֆրանսիացիների ազգային բնավորության առաջացման պատճառը նա համարում էր պատերազմները՝ նախ ֆրանսիական առանձին իշխանությունների միջև, և ապա Անգլիայի դեմ։

Ավելի հետաքրքրական է Չերնիշևսկու այն միտքը, թե պետությունը, «եթե դեռ այն գոյություն ունի»[2], անպայման միջամտում է մարդկանց տնտեսական գործունեությանը, ազդում նրա վրա։ Այս միտքը լրացվում է մի այլ դատողությամբ։ Չերնիշևսկին հույս էր հայտնում, որ այն ժամանակ, երբ գյուղացիները կազատագրվեն ճորտությունից, և լուսավորությունը կընդգրկի ժողովրդի ամենալայն մասսաներին, այլևս ավելորդ կլինեն օրենքները։ Նա գրում է. «Այն ժամանակ, իհարկե, արժեքների արտադրությունը յոլա կգնա առանց օրենքների, ճիշտ այնպես, ինչպես այժմ առանց նրանց յոլա են գնում գրոսանքը, ուտելը, թղթախաղը և հաճելի ժամանցի մյուս եղանակները»[3]։

Այսպիսով, ի տարբերություն հին մատերիալիստների, որոնք ձգտում էին հին օրենքների վերացմանը և նոր հավերժական օրենքների ստեղծմանը, Չերնիշևսկին ենթադրում էր, որ օրենքները հավերժական չեն, և որ կգա մի ժամանակ, երբ մարդիկ կգործեն առանց որևէ օրենքի։

Բացի այդ, եթե Դիդրոն, Հելվեցիուսը և Հոլբախը ձգտում էին ապագա հասարակության կլխին տեսնել «լուսավորված միապետին», ապա Չերնիշևսկին հանդես էր գալիս որպես ռեսպուբլիկական, աբսոլյուտիզմի թշնամի և նույնիսկ կռահում էր, որ ժամանակ կգա, երբ մարդկությունը պետության կարիքը

---

[1] Տես *Н. Г. Чернышевский*, Полн. собр. соч., т. IV, стр. 233.
[2] Там же, т. V, стр. 622 (ընդգծումը մերն է—Ռ. Կ.)։
[3] Там же, стр. 609.

չի զգա։ Եթե բարոյականությունն օրենքների միջոցով փոփոխելու մեջ բուրժուական մատերիալիստները ենթադրում էին հին հասարակարգի խաղաղ, ռեֆորմիստական փոփոխությունը, ապա բարոյականության որոշիչը համարելով հասարակության նյութական պայմանները, Չերնիշևսկին բարոյականության փոփոխությունը կապում էր այդ պայմանների՝ միմիայն ռևոլյուցիոն փոխակերպման հետ։ Նրա անհաշտ վերաբերմունքը դեպի դանդաղ, ռեֆորմիստական փոփոխությունները դրսևորված են լիբերալիզմի դեմ նրա մղած ռևոլյուցիոն պայքարում։ Նա չէր հանդուրժում հասարակության դանդաղ, միայն լիբերալների ցանկությունները բավարարող փոփոխությունները, որովհետև դրանք հակասում էին ժողովրդի շահերին։ Ահա թե ինչու, օրինակ, Չերնիշևսկին այնպես, ինչպես և Մարքսը, դատապարտում էր Ֆրանկֆուրտի ժողովի դանդաղկոտությունը, կոմպրոմիսը և ժողովրդի շահերից հեռու լինելը[1]։

Այսպիսով, մերժելով մարդկանց բարոյական և մտավոր հատկանիշների ձևավորման ու զարգացման գործում տարբեր ազգերի, տարբեր մարդկանց մոտ բարոյական սկզբունքների զանազանության գործում թե՛ աշխարհագրական միջավայրի, թե՛ խառնվածքի և թե՛ օրենքների ու կառավարության վճռական դերը, Չերնիշևսկին մի գլխով բարձրանում էր մինչմարքսյան պրոգրեսիվ փիլիսոփայական մտքից։

Չերնիշևսկին ցույց էր տալիս, որ մարդկանց բարքերի զանազանության ու փոփոխության մեջ որոշիչ դեր են կատարում նրանց նյութական պահանջները, նյութական կենցաղը, նա պատմագրությանը մեղադրում էր հենց այն բանի համար, որ նա իր ամբողջ ուշադրությունը նվիրելով հասարակական իդեաների և մեկ էլ որոշ անհատների կենսագրությունների ուսումնասիրությանը, բոլորովին չի անդրադարձել ժողովրդական կյանքի այնպիսի կողմերի ուսումնասիրությանը, ինչպես ժողովրդի բարքերն են և նյութական կենցաղը։ «Մարդկային ցեղի կյանքը, ինչպես և առանձին մարդու կյանքը,— գրում է Չերնիշևսկին,— կազմվում է շատ ու շատ տարրերի փոխադարձ ներթափանցումից. բացի արտաքին էֆեկտավոր իրադարձություններից, բացի հասարակական հարաբերություններից, բացի գիտությունից և արվեստից, ավելի պակաս կարևոր չեն բարքերը, սովորությունները, ընտանեկան հարաբերությունները, վերջապես, նյութական կյանքը, բնակարանները, սնունդը, այն բոլոր իրերի ու պայմանների հայթայթման միջոցները, որոնցով պահպանվում է գոյությունը, որոնցով ձեռք են բերվում կենցաղային ուրախությունները և վրշտերը»[2]։ Կշտամբելով պատմագրությանն այն բանի համար, որ նա, այն էլ միայն գիտության ու դրականության զարգացման նեղ մասնակիցների շրջանում, զբաղվում է միայն քաղաքական և մտավոր կյանքի պատմությամբ, Չերնիշևսկին ավելացնում է. «Բարքերի պատմությունն իր վրա շատ ավելի քիչ ուշադրություն է դրավում։ Կյանքի նյութական պայմանների մասին, որոնք խաղում են հազիվ թե ոչ առաջին դերը կյանքում, որոնք կազմում են կյանքի նաև այլ, ավելի բարձր սֆերաների գրեթե բոլոր երևույթների արմատական պատճառը, հազիվ է հիշատակվում, այն էլ՝ շատ թույլ և շատ անբավարար կերպով, այնպես որ ավելի լավ կլինի բնավ չհիշատակեին։ Չենք խոսում արդեն այն մասին, որ, ըստ էության, ամբողջ պատմությունը շարունակում է

[1] Տե՛ս Н. Г. Чернышевский, Избранные философские сочинения, т. III, стр. 838.
[2] Н. Г. Чернышевский, Полн. собр. соч., т. III, стр. 356.

մնալ գերազանցապես առանձին կենսագրությունների մի ժողովածու, և ոչ թե պատմություն ամբողջ բնակչության ճակատագրի մասին»[1]։

Իհարկե, Չերնիշևսկին գեռևս չուներ հասարակության նյութական կյանքի պայմանների գիտական հասկացողությունը։ Նա որոշ վերապահությամբ ընդունում էր, որ մարդկանց նյութական կյանքը հանդիսանում է հասարակական մյուս բոլոր երևույթների հիմքը, բայց նախ՝ նա չուներ նյութական կյանքի պարզ ըմբռնումը և հետո՝ նյութական կյանքի մեջ նա չէր տեսնում որոշիչ ուժը, այն է՝ բնակարանների, սննդի, հագուստի հայթայթման կամ արտադրության եղանակը։ Մյուս կողմից՝ նա որոշ չափով գերագնահատում էր գիտակցության դերը հասարակության զարգացման գործում։ Նա գտնում էր, որ բարքերի մեջ գոյություն ունեցող կոպտությունը, այլանդակությունները տգիտության արդյունք են և կարող են վերացվել միայն լուսավորության տարածման միջոցով։ Սակայն Չերնիշևսկին զգում էր այս տեսակետի թերի լինելը, երբ սկսում էր մտածել, թե ինչպես կարելի է տարածել լուսավորությունն այնպիսի պայմաններում, երբ, մի կողմից, ժողովրդի տգետ մեծամասնությունը զուրկ է լուսավորության միջոցներից, իսկ մյուս կողմից էլ՝ վերնախավերը գործադրում են ամեն տեսակի միջոցներ՝ նրանց լուսավորելու գործը խափանելու համար։ Այս մոմենտը նկատի ունենալով, Չերնիշևսկին գալիս էր այն եզրակացության, որ լուսավորություն տարածելու համար անհրաժեշտ է փոխել գոյություն ունեցող այնպիսի հասարակական հարաբերությունները, որտեղ որոշ խավեր արգելք են հանդիսանում ժողովրդին լուսավորելու գործին։ Հետևապես ժողովրդի մեջ հենց այդպիսի հասարակական հարաբերությունների հետևանքով առաջացած և դարերով ամրապնդված բարոյական վատ հատկանիշների վերացման համար անհրաժեշտ է վերացնել գոյություն ունեցող հասարակական հարաբերությունները[2]։

Չնայած Չերնիշևսկին չհասավ հասարակության նյութական կյանքի պայմանների մարքսիստական հասկացողությանը, չնայած նա չկարողացավ հայտնագործել նյութական բարիքների արտադրության եղանակը որպես հասարակության զարգացման որոշիչ ուժ և հասարակական իդեաների օբյեկտիվ հիմք, այնուամենայնիվ, նրա որոշ դրույթները մարդկանց բարոյական իդեաները, քաղաքական պատմությունը պայմանավորող նյութական կյանքի, իրավական նորմաները պայմանավորող տնտեսական կյանքի[3] մասին, մոտեցնում են նրան պատմական մատերիալիզմին։ Բարոյական իդեաների բաղմազանության և փոփոխելիության օբյեկտիվ հիմքը համարելով մարդկանց նյութական կյանքը, բնակարանները, սննդի «իրերի և պայմանների հայթայթման միջոցները», Չերնիշևսկին, համեմատած Հելվեցիուսի, Հոլբախի և Ֆոյերբախի հետ, ավելի ճիշտ էր լուծում մարդկանց իդեաների և հասարակական միջավայրի հարաբերության հարցը։

Բացի այդ, Չերնիշևսկու և բուրժուական մատերիալիստների ուսմունքի տարբերությունը դրսևորվում է նաև նրանում, որ եթե Դիդրոյի, Հելվեցիուսի, Ֆոյերբախի էթիկայում բացակայում էր բարոյական սկզբունքների դասակարգային բնույթի ըմբռնումը, ապա Չերնիշևսկու մոտ բարոյականության գրեթե

---

[1] *Н. Г. Чернышевский*, Полн. собр. соч., т. III стр. 357 *(ընդգծումը մերն է — Ռ. Կ.)*։
[2] Там же, т. IV, стр. 842.
[3] Там же, т. V, стр. 599.

բոլոր հարցերի քննարկման ժամանակ զգացվում է, որ նա ոչ թե աղոտ կերպով, այլ խորությամբ ըմբռնել է բարոյականության դասակարգայնությունը։ Չերնիշևսկին գտնում էր, օրինակ, որ ժողովուրդները միմյանցից տարբերվում են իրենց հատուկ լեզվով և ազգային, հայրենասիրության զգացումներով։ Սակայն, ինչպես նկատում է Չերնիշևսկին, յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր «դասային և պրոֆեսիոնալ բաժինները», որոնք նմանվում են ազգային լեզվով և հայրենասիրության զգացմունքով, սակայն խիստ տարբերվում են միմյանցից իրենց մտավոր և բարոյական կյանքի կողմերով, իրենց հատուկ կենցաղավարությամբ։

Դասերի կամ «պրոֆեսիոնալ բաժինների» այս հատուկ գծերը այնքան խիստ են աչքի զարնում, այդ գծերն այնպիսի խիստ սահմանման են դնում միևնույն ժողովրդի տարբեր դասերի միջև, որ բարոյապես և կենցաղով յուրաքանչյուր տվյալ դաս ավելի նման է մի այլ ժողովրդի համանման դասին, քան իր ժողովրդի մյուս դասային բաժնին։ «Ամբողջ Արևմտյան Եվրոպայի երկրագործ դասակարգն իր կենսաձևով և հասկացողություններով կարծես մի ամբողջություն է։ Նույն բանը պետք է ասել արհեստավորների, հարուստ ռամիկ մարդկանց, ունևոր դասի մասին։ Պորտուգալական մեծատունն իր կենսաձևով և հասկացողություններով շատ ավելի նման է շվեդական մեծատունին, քան իր ազգի երկրագործին։ Պորտուգալական երկրագործը այս տեսակետից ավելի նման է շոտլանդական կամ նորվեգական երկրագործին, քան Լիսաբոնի հարուստ վաճառականին»[1]։

Իհարկե, Չերնիշևսկին մինչև վերջ էլ չկարողացավ հասնել դասակարդերի մարքսիստական ըմբռնմանը, այլ աղոտ կերպով միայն կռահեց դասակարդերի կապը արտադրության եղանակի հետ։

Գնահատելով Չերնիշևսկու անհաշտ դիրքը ճորտատիրության նկատմամբ, ռուս գյուղացիության շահերից բխող նրա պայքարը ազնվականության ու լիբերալ բուրժուազիայի հակաժողովրդական թեորիաների դեմ, շատ հարցերի դասակարդային էության նրա ըմբռնումը, Լենինը նշում էր, որ «Նրա երկերից դասակարդային պայքարի ոգու շունչ է փչում»[2]։ Մինչդեռ այս հարցում ևս Պլեխանովը չէր նկատում ոչ մի տարբերություն Չերնիշևսկու և Ֆոյերբախի էթիկական դրույթների միջև։ Պլեխանովը, առանց խորանալու Չերնիշևսկու հասկացողության մեջ՝ հասարակական միջավայրի նկատմամբ հարկադրված էր ընդունելու, որ Չերնիշևսկին բարոյական սկզբունքների ձևավորման մեջ հասարակական միջավայրի վճռական դերի հարցում ևս «միայն շարադրում և զարգացնում էր... իր ուսուցիչ Ֆոյերբախի հայացքները», և որ Ֆոյերբախի հայտնի աֆորիզմները միջավայրի և մարդկանց բարոյական ու մտավոր հատկանիշների կապի մասին, հանդիսանում են XVIII դարի մատերիալիստների ուսմունքի սոսկ կրկնողությունը և մասամբ՝ գործադրությունը փոփոխված հանդամանքների նկատմամբ»[3]։

Պարզ է, որ Պլեխանովը չի նկատել ոչ միայն էթիկական հայացքներում դրսևորվող դասակարդային տարբերությունները Չերնիշևսկու և արևմտաեվրոպական մատերիալիստների միջև, այլև Չերնիշևսկու տեսական շատ

---

[1] Ն. Գ. Չերնիշևսկի, Փիլիս. ընտիր երկեր, էջ 318։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 298։

[3] Г. В. Плеханов, Сочинения, т. V, стр. 203 (ընդգծումը մերն է—Ռ. Կ.)։

դրույթների գերազանցությունը՝ թե՛ Ֆոյերբախի և թե՛ XVIII դարի ֆրանսիական մատերիալիստների էթիկական տվյալ դրույթների նկատմամբ։

Բարոյականության նկատմամբ արտաքին հանգամանքների հարաբերության հարցում առաջնությունը տալով արտաքին հանգամանքներին, Չերնիշևսկին ոչ թե մետաֆիզիկորեն միջավայրը հակադրում է մարդկային բարոյական սկզբունքներին, այլ առաջ է քաշում միջավայրի նկատմամբ մարդկանց ակտիվ, փոխակերպիչ դերի հարցը։ Հելվեցիուսը, Դիդրոն, Հոլբախը չէին նկատում մարդու մեջ նրա պրակտիկ, գործունյա բնավորությունը և դարձնում էին նրան արտաքին հանգամանքներին ենթակա պասիվ մի էակ, որը պատրաստ է հասարակական միջավայրի ազդեցության ներքո ընդունել ամենայն ձև։ Հելվեցիուսը գերագնահատում էր դաստիարակության դերը և զրոյի էր հավասարեցնում դաստիարակվողի ակտիվ էությունը, սուբյեկտիվ վերաբերմունքը դեպի արտաքին հանգամանքները։ Չերնիշևսկին, ընդհակառակը, ելնելով ռևոլյուցիոն-դեմոկրատական դիրքերից, մարդու մեջ բացահայտում էր նրա ակտիվությունը, և իրեն շրջապատող պայմանների մեջ անընդհատ փոփոխություն մտցնելու ձգտումը։

Պաշտպանելով գյուղացիության շահերը, Չերնիշևսկին կամքի ազատության պրոբլեմի իր մեկնաբանությամբ ձգտում էր ռուս գյուղացու մեջ արմատավորել այն համոզումը, որ նա օժտված է մարդուն հատուկ նաև այնպիսի հատկությամբ, ինչպես ակտիվությունն է, որ ռուս աշխատավորը կարող է ակտիվ կերպով ներազդել գոյություն ունեցող հասարակական հարաբերությունների վրա, փոխել դրանք, համապատասխանեցնել իր սեփական մղումներին և ցանկություններին։

Կամքի ազատության հարցում Չերնիշևսկին ելնում էր դետերմինիզմի դիրքերից։ Նա գտնում էր, որ մարդկային բոլոր գործողությունները պատճառականորեն պայմանավորված են։ «Այն երևույթը,—գրում է Չերնիշևսկին,—որը մենք կամք ենք անվանում, ինքը հանդիսանում է մի օղակ՝ պատճառական կապով միացած երևույթների և փաստերի շարքում»[1]։ Հետևապես, մարդկանց կամային գործողությունները պետք է բացատրել ոչ թե նրանց երևակայությամբ, այլ այն պայմաններով, որոնք մարդու մեջ ծնում են որոշ ցանկություններ, մղումներ և այլն։ Չերնիշևսկին քննադատում էր ինդետերմինիստական դրույթները, որոնք հեռացնում էին մարդու ուշադրությունը ռեալ իրականությունից։ Նա ցույց էր տալիս, որ երևակայությամբ երբեք չի կարելի հասնել կամքի ազատության, բավարարել անձնական նյութական պահանջները և այլն։ Իրականությունը բոլորովին այլ խնդիր է առաջադրում, որի լուծման համար դատարկ, հողից կտրված երևակայությունն անպետք է։

Քանի որ մարդու յուրաքանչյուր կամային գործողություն պայմանավորված է արտաքին որոշ հանգամանքներով, ապա այդ նշանակում է, որ չպետք է կանգ առնել մարդկային որևէ արարքի գնահատման վրա, այլ պետք է ձգտել բացահայտելու նրանց ծնող օբյեկտիվ պատճառները։ Այսպես, օրինակ, Չերնիշևսկին գտնում էր, որ ռուսական հասարակության տարբեր խավերի միջավայրում ծնունդ առած բարոյական վատ հատկությունները հանդիսանում են մարդկային կամքի և մարդկանց շրջապատող միջավայրի հակասության հետևանքը։ Այս հակասությունը խեղաթյուրում, և մարդու համար վնասակա-

[1] Ն. Գ. Չերնիշևսկի, Փիլիս. ընտիր երկեր, էջ 62։

րության հասնող չափով ծայրահեղ է դարձնում նրա զանազան պահանջները։ «Այս պայմանները,— գրում է Չերնիշևսկին,— այնքան անբարենպաստ են մարդկային բնության արմատական պահանջների համար, որ մեզանից ամենալավագույնը տառապում է այդ թերությամբ»[1]. այսինքն՝ արատներով, չափազանցված կրքերով, փառասիրությամբ։ Վերլուծելով Շչեդրինի «Նահանգական ակնարկները», Չերնիշևսկին նշում էր, որ բուերակիննների կամ դատարանի գրագիրների կողմից ցուցաբերվող արարքները ծածկում են նրանց ներքին, գուցե և առողջ, մարդկային հատկությունները։ Կան մարդիկ, որոնք թեորիական զրույցների ժամանակ հանդես են գալիս որպես անարդարությունների, կեղծիքի և այլ վատ բարոյական գծերի թշնամի, բայց բավական է, որ նրանք ոտք դնեն գործնական կյանք, և նրանք իսկույն կդավաճանեն իրենց համոզմունքներին և տուրք կտան իրենց իսկ կողմից կշտամբանքի արժանացող կեղծիքին ու ստորաքարշությանը։ Այս փաստերից ելնելով, Չերնիշևսկին անում էր այն հանճարեղ կռահումը, որ մարդկությունը բազմաթիվ անարդարությունների, տմարդի գործերի հաղթահարման միջոցով՝ ինչպես քավարանի միջով՝ գնում է դեպի իր սեփական մարդկային առողջ հատկությունների անխափան դրսևորումը[2]։

Այսպիսով, որպեսզի մարդու սեփական էությունից բխող ցանկությունները և ձգտումներն ունենան իրենց ազատ բավարարման հնարավորությունը, անհրաժեշտ է, ըստ Չերնիշևսկու, վերացնել այն հասարակական հարաբերությունները, որոնց հետ մարդկային առողջ ձգտումները հակասության մեջ են դտնվում։ Վերացնելով Ռուսաստանում ճորտատիրական կարգերը, մարդիկ հնարավորություն ձեռք կբերեն դրսևորելու իրենց ազատ, չխեղաթյուրված, անկեղծ կամքը։ Այն հասարակարգը, որտեղ մարդիկ անձնապես ազատ կլինեն, կապիտալիզմը չէ, որովհետև այդտեղ, ինչպես ճիշտ նկատում է Չերնիշևսկին, մարդուն տրված կարծեցյալ ազատությունների քողի տակ իրագործվում է անհատի կամքի ճնշումը։ Հասարակական կյանքում թագավորող անսահման մրցակցությունը թե՛ հողագործության և թե՛ ֆաբրիկա-գործարանային արդյունաբերության բնագավառում ճնշում է վարձու աշխատողների շարքն անցնող մանր արտադրողներին[3]։ Այն հասարակարգը, որտեղ մարդիկ անձնապես ազատ կլինեն, ըստ Չերնիշևսկու, սոցիալիզմն է, որի հիմքը կազմող համայնական սեփականությունը հնարավոր կդարձներ մարդկանց կամքի ազատ դրսևորումները։

Չերնիշևսկին գտնում էր, որ ինչքան էլ մարդու կամքը պայմանավորված լինի օբյեկտիվ հանգամանքներով, նա կարող է ձևափոխել իրեն շրջապատող անընդունելի պայմանները և աստիճանաբար հասնել իր կյանքի բարելավմանը և իր ցանկությունների կատարմանը, եթե նա գործի բնության և ոգու օրենքներին համաձայն։ Չերնիշևսկին ընդգծում էր այն միտքը, որ չի կարելի դրական համարել այն մարդուն, «որը, հասկանալով, որ մարդը մատակարարվում է ուժերով և հաստատուն հաճույքներով միայն իրականության կողմից, հանկարծ հայտարարեր, որ իրականության մեջ չկան այնպիսի երևույթներ, որոնք մարդու համար հարկավոր և հնարավոր լիներ փոփոխման ենթարկել։

---

[1] *Н. Г. Чернышевский.* Избр. фил. соч., т. II, стр. 595.
[2] Там же, стр. 163.
[3] Там же, стр. 97.

որ իրականության մեջ մարդու համար ամեն ինչ հաճելի է ու լավ, և որ մարդը յուրաքանչյուր փաստի առաջ կատարելապես անզոր է»[1]։

Այսպիսով, Չերնիշևսկին դնում էր մարդու կամքը կաշկանդող և այդ պատճառով՝ անբարոյական արարքներ հարուցող պայմանների փոփոխման անհրաժեշտության հարցը՝ մարդկային ակտիվ գործունեության, իրականությունից նրան տրված ուժի, անընդունելի փաստերը լիովին վերացնելու նրա զորության միջոցով։

Սակայն, ո՞րն է իրականության նկատմամբ մարդու կամքի ազատության, ուրեմն նաև իր ցանկություններն ազատ ձևով բավարարելու պայմանը։ Ըստ Չերնիշևսկու, այդ պայմանն իրականության ճանաչումն է, որը հնարավոր է կրթության ու լուսավորության տարածման միջոցով։ «Շատ հաճախ,— գրում է նա,— հայտնի վարմունքի համար մեր մեջ կամքի հայտնվելու ամենամոտ պատճառը լինում է միտքը։ Բայց կամքի որոշակի հակվածությունը նույնպես առաջանում է որոշակի մտքի միջոցով. ինչպես միտքն է, այնպես էլ կամքն է. թող այդպես չլինի միտքը, այդպես չէր լինի և կամքը»[2]։

Չերնիշևսկու այս դիտողությունը չի կարելի համարել կամքի ինդետերմինիստական ըմբռնում, երբեք չի կարելի կարծել, որ նա կամքը կախման մեջ է դնում զուտ մտքից։ Չերնիշևսկին պայքարում էր հենց կամքի այդպիսի ըմբռնման դեմ։ Երբ Չերնիշևսկին գրում է, որ ինչպես միտքն է, այնպես էլ կամքն է, ապա ցանկանում էր շեշտել ոչ թե կամքի բացարձակ ինքնուրույնությունը, այլ այն, որ մարդու արարքի օգտակարությունը, խելացիությունը, հետևապես նաև արարքի ընդունելի կամ անընդունելի լինելը կախված է մարդու կրթության աստիճանից։ Չնայած մարդկանց բարքերի փոփոխությունը կախման մեջ դնելով կրթությունից և լուսավորությունից, գիտակցության աստիճանից, Չերնիշևսկին հանդում էր իդեալիզմի, սակայն ռուս հասարակ մարդուն ինքնուրույն գործունեության մղելու, նրա կամքին ազատություն տալու, նրան սեփական արժանապատվության գիտակցության հասցնելու համար ռուս մեծ ուևոլյուցիոների տվյալ գրույթը առաջադիմական էր։

Եթե բարոյական արարքների բնույթը կախված է անհատների կրթության աստիճանից, ապա այդ նշանակում է, որ Ռուսաստանի բնակչության բացարձակ անկիրթ ու տգետ մեծամասնությունը, ռուս աշխատավոր գյուղացիությունը չի կարող կատարել մարդկային բնությանը համապատասխանող գործողություններ, չի կարող գտնել վատ արարքներից խուսափելու և լավ արարքներ գործելու միջոցները, և բնականաբար կկատարի այնպիսի գործողություններ, որոնք վնասակար կլինեն հենց իր համար։ Այն հանգամանքը, որ ռուս մուժիկը գերադասում էր քաշ տալ իր ոչ մարդկային, անմխիթար վիճակը և ոտքի չէր ելնում իր հարստահարողների դեմ, նշանակում էր, որ նա չէր գիտակցում իր վիճակի փոփոխության հնարավորությունը և միջոցները։

Եվ գյուղացիներին իսկապես բարի, անարատ դարձնելը, նրանց մեջ առողջ կամք դաստիարակելը Չերնիշևսկին այս կերպ էլ հասկանում էր։ Գյուղացին չի կարող լինել իսկական մարդ, չի կարող կատարել համայն ռուս հասարակության համար օգտավետ, բարի գործ, եթե նա չի կարողանում հասկանալ, որ մարդը կարող է փոխել շրջապատը՝ համաձայն իր պահանջների, եթե նա

[1] Ն. Գ. Չերնիշևսկի, *Ռուս գրականության գոգոլյան շրջանի ուրվագծեր*, Երևան, 1953, էջ 392։

[2] Ն. Գ. Չերնիշևսկի, *Փիլիս. ընտիր երկեր*, էջ 62։

չի գիտակցում իր վիճակի փոփոխության անհրաժեշտությունը։ Հակառակ Շևիրյովի, որը պաշտպանում էր ռեակցիոն կալվածատիրության շահերը և, այդ իսկ պատճառով, գտնում էր, որ գյուղացիների մեջ առողջ կամք դաստիարակելու միակ միջոցը հարկադրանքն է, Չերնիշևսկին գտնում էր, որ հարկադրանքն ամենից առաջ բռնություն է, մի բարբարոսություն, որով երբեք չի կարելի մարդկանց նախապատրաստել քաղաքակրթության համար։ Բացի այդ, Չերնիշևսկին, հետևելով Ռադիշչևին և Ռուսսոյին, սովորեցնում էր, որ հարկադրանքը ոչ միայն չի ծնում մարդկանց մեջ առողջ հատկություններ, այլև, ընդհակառակը, ավելի է փչացնում նրանց. «Ազատազրկումն ինքնին զրգռում է մարդկանց, փչացնում նրանց, նրանց մեջ զարգացնում է ստոր և չար հակումներ»[1]։

Իսկ թե ինչպես է հարկավոր ռուս գյուղացիությանը հասցնել վատ արարքներ առաջացնող պայմանների նկատմամբ նրանց կամքի ներգործության, այսինքն՝ այդ պայմանները նրանց կողմից անհրաժեշտորեն փոփոխելու մղտրին, Չերնիշևսկին ցույց է տալիս իր վեպերում, և հատկապես «Ինչ անել» նշանավոր գրքում, ինչպես նաև Վեբերի «Ընդհանուր պատմության» առթիվ արված իր դիտողություններում։ Այս վերջինում նա նշում է, որ գյուղացիների վատ արարքները, որոնք ծագում են լավը չհասկանալուց, պետք է վերացնել ոչ թե գյուղացիների նկատմամբ բռնություն գործադրելու, այլ «ամեն մի մեծահասակ մարդու, թեկուզ և ամենաանուս մարդու ըմբռնման համար»[2] մատչելի ճշմարտությունները, կենսական խելամտության կանոնները նրանց հաղորդելու, սովորեցնելու միջոցով։ Եվ քանի որ գյուղացիներն իրենք ներքին մղում ունեն լավ արարքներ գործելու, սակայն ի վիճակի չեն այդ անել իրենց անտանելի կյանքի պատճառով, ապա նրանց պետք է ոչ թե հրամցնել անօգուտ խրատներ, որոնց կարիքը նրանք չեն զգում, այլ անհրաժեշտ է միջոցներ տրամադրել նրանց՝ վատը լավով փոխարինելու համար։

«Իրենց ժողովրդի բարին ցանկացող մարդկանց պարտականությունն է օգնել բոլոր դասերի մարդկանց հսկայական մեծամասնության այդ ցանկության իրագործմանը... Այսպես պետք է լինեն լուսավորյալ մարդկանց հարաբերություններ դեպի իրենց հայրենակիցների մասսան»[3]։

Այստեղ Չերնիշևսկին ոչ միայն նշում է կամքի ազատության համար օբյեկտիվ օրենքները, կամ վատը լավից տարբերելու համար՝ թե լավը ճանաչելու անհրաժեշտությունը, այլև առաջադրում է ռուս հասարակ ժողովրդի վիճակը, բարքերը փոփոխելու մի ծրագիր։ Իր կյանքի վերջում մեծ ռևոլյուցիոներ-դեմոկրատը նորից առաջ էր քաշում վաղուց փայփայած իր այն միտքը, թե գյուղացիությանը դարավոր քնից արթնացնելու և ինքնուրույն պատմական գործողությունների մղելու համար մեծ գործ պետք է կատարեն «լուսավորյալ մարդիկ», որոնց կերպարներն են հանդիսանում «Ինչ անել» գրքի հերոսները։ Ռախմետովը, Լոպուխովը, Վերա Պավլովնան և ուրիշները հենց այն լուսավորյալ անձնավորություններն էին, որոնք վարվում էին՝ ելնելով իրենց կողմից գիտակցված մարդկային բնության պահանջներից, կատարում էին թե՛ իրենց և թե՛ ուրիշների համար հաճելի գործեր և այլն։ Նրանք այն «նոր մարդիկն» էին, որոնք ղեկավարվում էին «խելացի էգոիզմի» սկզբունքներով և պայքա-

---

[1] Ն. Գ. Չերնիշևսկի. Փիլիս. ընտիր երկեր, էջ 342։

[2] Նույն տեղում, էջ 338 (ընդգծումը մերն է—Ռ. Կ.)։

բում էին՝ իրենց հետևից ռուս հասարակ մարդկանց տանելու համար։ Չերնիշևսկին կոչ էր անում աշխատավոր գյուղացիությանը, որպեսզի նրանք դիտեին, մտածեին, կարդային, հետազոտեին և հետևեին նրանց, որոնք խոսում են կյանքի մաքուր հաճույքի մասին և այն մասին, թե ինչպես պետք է մարդը դառնա բարի և երջանիկ։ Մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատը անհուն ատելություն էր տածում ճորտատիրական կարգերի նկատմամբ հենց այն պատճառով, որ այդ կարգերում ռուս գյուղացին զուրկ էր ոչ միայն իր տարրական պահանջները բավարարելու հնարավորությունից, այլև մարդ համարվելու և իր մարդկային արժանապատվությունը պաշտպանելու իրավունքից։ Նա պաշտպանում էր այն միտքը, որ գյուղացիներն ավելի մեծ իրավունք ունեն մարդ կոչվելու համար, քան բարձրաստիճան ազնվատոհմիկ արիստոկրատները, որովհետև վերջիններս խուսափում են գյուղացու կողմից կատարվող այն ֆիզիկական աշխատանքից, որը մարդկային բնության առաջնահերթ պահանջներից մեկն է։ Որպես մարդ գյուղացին ևս կարող է լինել խելացի էգոիստ, և բավարարելով իր ֆիզիկական ու հոգեկան պահանջները, միաժամանակ բարիք գործել հասարակության համար։ Չերնիշևսկին իր աշխատություններում զարգացնում էր այն միտքը, որ հանրօգուտ գործունեությունը, հասարակական անընդունելի կարգերի փոփոխման համար ծավալված պայքարը, ամենաօգտակար հաճույքն է մարդու համար։ Այդ հաճույքի դեմ նսեմանում է նույնիսկ մարդու համար ամենաթանկագին բանը՝ ապրելու հաճույքը, կյանքը։ Լինել խելացի էգոիստ, նմանվել Ռախմետովին, հետևել նոր մարդկանց, նշանակում է՝ կարողանալ նրանց նման կշռադատել սեփական վարմունքները, ընտրել նրանցից ամենահաճելին կամ ամենաօգտակարը և, ակտիվ կերպով ներգրավվելով հանրօգուտ գործունեության մեջ՝ ի վիճակի լինել այդ գործունեության համար զոհաբերել անձնական շատ հաճույքներ, նույնիսկ ամենաթանկ հաճույքը՝ կյանքը։ Չերնիշևսկին հասկացնել էր տալիս ռուս գյուղացուն, որ պետք է մահու և կենաց պայքար մղել ճորտատիրությունից ազատագրվելու համար, որ հենց այդ պայքարն է այն հանրօգուտ, ամենահաճելի գործը, որի համար ռուս գյուղացին չպետք է խնայի իր կյանքը։ Մեծ մտածողը նշում էր, որ ավելի մարդկային է մեռնել ազատագրության համար մղվող պայքարում, քան ապրել մարդկային տարրական պայմաններից զուրկ, անտանելի կյանքով։

Այսպիսով, ըստ Չերնիշևսկու, չնայած մարդու բարոյական կերպարը, նրա հասկացողությունները գոյություն ունեցող հասարակության միջավայրի արդյունքն են, սակայն մարդը կարող է ակտիվորեն ազդել իրեն շրջապատող միջավայրի վրա, փոխել, բարելավել այն իր պահանջներին համապատասխան, եթե հասկանում, գիտակցում է իր շահերը, հասարակական կարգերը փոփոխելու անհրաժեշտությունը, եթե նա կարողանում է վարվել որպես խելացի էգոիստ և զուգակցել իր անձնական շահերը հասարակական շահերի հետ։

Չերնիշևսկու ամբողջ տեսությունը բարոյականության նկատմամբ հասարակական միջավայրի հարաբերության հարցի վերաբերյալ ներծծված էր ռևոլյուցիոն-դեմոկրատական գաղափարներով և հետապնդում էր գյուղացիական ռևոլյուցիայի անհրաժեշտությունը տեսականորեն հիմնավորելու, ինչպես նաև ժողովրդին ապագայի հեռանկարներով լուսավորելու և պայքարի ոգեշնչելու նպատակը։